ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 124

ք. Երևան 15.06.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վառելափայտի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/15» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել Պետրոս Աթոյան Ա/Ձ-ն /ՀՎՀՀ՝ 28183345, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, ՀԱՌ Բ3 Միքայելյան 83/2 /(այսուհետ՝ Մասնակից):

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/15» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2024թ.-ի որոշմամբ Մասնակցի հայտը գնահատվել էր բավարար և ընթացակարգի շրջանակներում ճանաչվել էր ընտրված մասնակից: Անգործության ժամկետ չի սահմանվել, քանի որ ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից և օրենքով սահմանված ժամկետում՝ վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

05.06.2024թ.-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակցի կողմից օրենքով սահմանված ժամկետում պատվիրատուին չի ներկայացվել իր կողմից հաստատված /կնքված/ պայմանագիրը և պայմանագրի որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և ընթացակարգի հրավերի 9.5 կետերի պահանջները՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հաշվի առնելով, որ Մասնակիցը, որպես ընտրված մասնակից զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը, որոշում եմ՝ Մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ